30 03 0

Ш Е Н

www.shen.am

2017

Հանրագիտարան

Ш Е Н

ԾԱԽՍԵՐ (ՀՀ ԴՐԱՄ)



- Գյուղատնտեսական կոոպերատիվների և մարքեթինգային խմբերի հզորացում
- Աշխատատեղերի խթանմանն ուղղված ծրագրեր
- Ենթակառուցվածքների բարելավում
- Բնապահպանական ծրագրեր
- Համայնքների հզորացում
- Սոցիալական աջակցություն
- Վարչական ծախսեր

Գյուղատնտեսական կոոպերատիվների և մարքեթինգային խմբերի հզորացում	246,721,637
Աշխատատեղերի խթանմանն ուղղված ծրագրեր	120,512,729
Ենթակառուցվածքների բարելավում	98,180,083
Բնապահպանական ծրագրեր	13,323,181
Համայնքների հզորացում	4,267,599
Սոցիալական աջակցություն	4,121,074
Վարչական ծախսեր	2,056,654
Ընդամենը	**489,182,957**

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (ՀՀ ԴՐԱՄ)



Հաց Աշխարհին, Գերմանիա	80,201,185
Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ (IFAD)	54,379,268
Շէն-Ֆրանսիա	50,054,707
HEKS-EPER, Շվեյցարիա	35,274,534
Յալկեզյան հիմնադրամ, Կանադա	31,995,605
Անիվ հիմնադրամ, Հայաստան	23,900,000
Համայնքների ներդրում	10,020,000
Օդեմաղ Պիկետ հիմնադրամ, Շվեյցարիա	8,060,993
ՀՀ Կառավարություն (ԱԱՀ ազատում)	3,003,102
ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամ	2,618,000
Անդամավճարներ և այլ մասնավոր ներդրումներ	3,068,897
Հայաստանի մանուկներ հիմնադրամ	1,940,000
Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցություն	1,410,000
Ընդամենը	**305,926,309**

Շեն բարեգործական հասարակական կազմակերպության 30-ամյա հոբելյանը

Միջոցառումը տեղի ունեցավ ս.թ. հունիսի 12-ին, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը: Ներկա էին 166 անդամներ և շահառու համայնքների ներկայացուցիչներ: Հրավիրվածների թվում էին կազմակերպության հիմնադիր անդամները, պատվիրակություններ Շենի արցախյան մասնաճյուղից, Շէն Ֆրանս կազմակերպությունից, Յալկեզյան հիմնադրամից, ՄԱԿ-ի հայաստանյան գործակալություններից, համագործակցող հասարակական կազմակերպություններից:



Շեն ԲՀԿ վարչության նախագահ **Հ.Մինասյանը** բացման խոսքում, ողջունելով ներկաներին, նշեց, որ 30-ամյա հոբելյանը տեղի է ունենում երկրում իրականացված համաժողովրդական թավշյա հեղափոխությունից անմիջապես հետո: Նա հույս հայտնեց, որ մարդկանց գիտակցության մեջ կատարված արմատական փոփոխություններին կհետևեն անդառնալի բարեփոխումներ տնտեսական ու հասարակական բոլոր ոլորտներում: Սա թույլ կտա Շենին բացառապես զբաղվել գյուղական համայնքներում ենթակառուցվածքների վերականգնման, բարձրարժեք օրգանական գյուղատնտեսության խթանման, ժամանակակից գիտելիքի փոխանցման հարցերով, այլ ոչ թե օրենսդրական դաշտի բարելավման, կոռուպցիային դիմակայելու և գյուղում մարդկանց արժանապատիվ ապրելու իրավունքի հաստատման խնդիրներով:



Տաթև Արք. Սարգսյանը, ողջունելով ներկաներին, գնահատեց Շենի հայրենանվեր աշխատանքը: Նա բարձր արժևորեց ներկաների 30 տարի առաջ ազգային ազատագրական պայքարին անմացորդ նվիրվելու կամքը: «Հաջորդ սերունդները շարունակեցին մեծերի գործը և լծվելով ազատագրական պայքարին՝ դարձան նվիրյալներ: Դուք եղաք այն հզոր ուժը, որի շնորհիվ ազատագրական պայքարը դարձավ հաղթանակ: Պատերազմից հետո ձեզնից շատերը ներգրավվեցին գյուղական զարգացման տարբեր ծրագրերում՝ բերելով զգալի ավանդ մեր ժողովրդի բարեկեցության բարձրացմանը», - ասաց Սրբազանը: Սրբազանը նշեց, որ Շենի աշխատանքը լավ օրինակ է Հայաստանի և սփյուռքի հասարակական կազմակերպությունների համար:



24. Սյունիքի մարզի Շաքի համայնքի ոռոգման ջրագծի վերականգնում
25. Սյունիքի մարզի Անգեղակոթ համայնքի ոռոգման ջրագծի վերականգնում
26. Սյունիքի մարզի Շաղատ, Անգեղակոթ և Շաքի համայնքներում գործող սպառողական կոոպերատիվների անդամների համար տեսական և գործնական սեմինար պարապմունքների կազմակերպում
27. Սյունիքի մարզի Աշոտավան, Բնունիս և Թասիկ համայնքների ազնվամորի արտադրող տնտեսությունների համար տեսական և գործնական սեմինար պարապմունքների կազմակերպում
28. Տավուշի մարզի Գոշ և Խաչարձան համայնքներում տուրիստական ուղիների պատրաստում, սանհանգույցների կառուցում և վերանորոգում
29. Տավուշի մարզի Կոթի համայնքում գործող սպառողական կոոպերատիվի խթանում
30. Տավուշի մարզի Կոթի, Ոսկևան և Բաղանիս համայնքների պտղաբուծական տնտեսությունների համար տեսական և գործնական սեմինար պարապմունքների կազմակերպում
31. Տավուշի մարզի Բերդավան և Կոթի համայնքներում գործող սպառողական կոոպերատիվների անդամների համար տեսական և գործնական սեմինար պարապմունքների անցկացում, փորձի փոխանակման այցելությունների կազմակերպում
32. Գեղարքունիքի և Վայոց Ձորի պտղաբուծական տնտեսություններում մշակության նոր տեխնոլոգիաների ներդրում
33. Օրգանական մրգի արտադրության ընդլայնում օրգանական այգիների կառավարման բարելավման և գյուղացիներին օրգանական գյուղատնտեսական կոոպերատիվի մեջ ընդգրկելու միջոցով

13. Գեղարքունիքի մարզի Թթուջուր համայնքի մանկապարտեզի վերանորոգում և կահավորում
14. Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի դպրոցի խաղահրապարակի վերանորոգում
15. Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի դպրոցի շենքում մանկապարտեզի կառուցում և կահավորում
16. Գեղարքունիքի մարզի Թթուջուր և Մարտունի համայնքներում գործող սպառողական կոոպերատիվ-ների անդամների համար տեսական և գործնական սեմինար պարապմունքների կազմակերպում, փորձի փոխանակման այցելությունների կազմակերպում
17. Լոռվա մարզի Լեռնավան համայնքի ոռոգման ջրագծի վերականգնում
18. Շիրակի մարզի Եղնաջյուր համայնքում Շիրակի մարզի անապահով ընտանիքների երեխաների համար ամառային «Վերադարձ դեպի բնություն» ճամբարի կազմակերպում
19. Շիրակի մարզի Բավրա և Առափի համայնքներում գործող գյուղատնտեսական կոոպերատիվների անդամների համար տեսական և գործնական սեմինար պարապմունքների կազմակերպում, փորձի փոխանակման այցելությունների կազմակերպում
20. Սյունիքի մարզի Շաղատ համայնքի ֆուտբոլի դաշտի վերականգնում
21. Սյունիքի մարզի Շաղատ համայնքի բուժկետի վերանորոգում
22. Սյունիքի մարզի Շաղատ համայնքում գործող «Շաղատ համայնքի արոտ օգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվի գրասենյակի վերանորոգում և կահավորում
23. Սյունիքի մարզի Անգեղակոթ համայնքում գործող «Անգեղակոթ համայնքի Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվին տրակտորի, գութանի և այլ գյուղատնտեսական տեխնիկայի տրամադրում

Շեն ԲՀԿ հիմնադիր անդամ **Հակոբ Մովսեսյանը**, շնորհավորելով ներկաներին օրվա առիթով, ողջունեց ազատամարտում հանդիպած անձանց, որոնց հետ պայքարել են կողք կողքի: Նա բարձր գնահատեց 30 տարի առաջ ազգային պայքարով սկիզբ առած կազմակերպության գործունեությունը՝ ի նպաստ ՀՀ գյուղական համայնքների կայուն զարգացման:

Շեն ԲՀԿ հիմնադիր անդամ **Շիրակ Մարկոսյանը** իր և իր ընկերների գործունեությունը գնահատեց որպես ինքնամոռաց, անձնուրաց, հայրենանվեր կռիվ: Նա նշեց, որ հաղթական ավարտին հաջորդեց ազատագրված գյուղերի վերաբնակեցման ծրագիրը, և սկսվեցին կառուցողական աշխատանքները, ինչի համար շնորհակալություն հայտնեց Շեն ԲՀԿ բոլոր անդամներին: Մեկ տասնյակ տարի առաջ նախաձեռնած մեր գործունեությունը՝ համայնքային հիմնադրամների միջոցով գյուղերում տնտեսական աճի ապահովման ուղղությամբ շատ հաջողություններ չունե-ցան, և այդ պատճառով Շենը նախաձեռնեց սպառողական կոոպերատիվների հիմնումը: Այստեղ արդեն կա հույս, որ կարելի է հասնել ավելի կայուն արդյունքների, քանի որ օրենսդրական դաշտը (նաև մեր շնորհիվ) բարելավվում է:

Շեն ԲՀԿ վարչության անդամ **Արմեն Տոնոյանը** իր ելույթում ասաց, որ գյուղական համայնքներում աղքատության և գործազրկության բարձր ցուցանիշները մեղմելու համար Շենը վերջին տարիների ընթացքում կարևորում է բնակչության եկամուտների կայուն ավելացումը խթանող ծրագրերի գործունեությունը:

Ըստ մեր դիտարկումների՝ ծրագրերի կայունությանը նպաստում է երկու մոտեցումների՝ կարողություններ զարգացման և արդարացված նյութական ներդրումների համադրությունը: Արդյունավետ գործող կոոպերատիվների խթանումը կարող է նպաստել աղքատության կրճատմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը:

2014 թ-ից ի վեր Շենը նպաստել է 18 կոոպերատիվների և գյուղատնտեսությամբ զբաղվող խմբերի ստեղծմանը՝ նպատակ ունենալով բարելավելու գյուղացիական փոքր տնտեսությունների եկամուտները գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման և արժեշղթաներում նրանց արդյունավետ ներգրավման միջոցով: Շենի շահառու կոոպերատիվները իրենց գործունեությամբ տարատեսակ են՝ ծառայություններ մատուցող, արտադրող-վերամշակող-համատեղ վաճառք իրականացնող:

Կոոպերատիվների անդամների համար կազմակերպվել են ուսումնական տարբեր դասընթացներ՝ բիզնես մտածողության զարգացման, առաջադեմ գյուղատնտեսական տեխնոլոգիաների ծանոթացման վերաբերյալ, կազմակերպվել են փորձի փոխանակման այցելություններ: Տրամադրվել են իրենց գործունեության համար անհրաժեշտ սարքավորումներ և գյուղ տեխնիկա:

Կոոպերատիվների հետ աշխատելիս հաշվի է առնվում գոյություն ունեցող խնդիրների բնույթը, ուսումնասիրվում են վերջիններիս լուծման եղանակները, որպեսզի բացառեն դրանց ազդեցությունը Շենի գործունեությունում:

Շեն ԲՀԿ վարչության անդամ **Անահիտ Նավասարդյանը** հակիրճ ներկայացարեց 30 տարիների ընթացքում իրականացված ծրագրերի արդյունքները.

- Վերականգնել և վերաբնակեցրել է 8 գյուղ:
- Սպառելով ՀՀ-ում դատական պաշտպանության բոլոր միջոցները՝ Սահմանադրական Դատարանում վիճարկել և փոխել է 2 օրենք՝ Սնանկության մասին և Շահութահարկի մասին օրենքները:
- Գյուղական վայրերում խթանել է 3250 աշխատատեղեր: Օժանդակել է 18 կոոպերատիվների գործունեությանը:
- Խթանիչ գործողությունների շնորհիվ 1500 հա անմշակ հող վերածվել է այգիների:
- Կառուցել և վերանորոգել է խմելու և ոռոգման ջրագծեր 63 համայնքներում:
- Վերակառուցել և գործարկել է 29 մանկապարտեզ և նախակրթարան:
- Նորոգել և կահավորել է 28 համայնքային և դպրոցական մարզադահլիճներ, մարզահրապարակներ:
- Հիմնել է 32 համակարգչային կենտրոն գյուղերի դպրոցներում և համայնքային կենտրոններում:
- Արցախի Հանրապետության գյուղական դպրոցներին տրամադրվել է շուրջ 300 համակարգիչ:
- Կառուցել է շուրջ 60 կմ միջգյուղական ճանապարհ:
- 17 գյուղական ամբուլատորիաներ և բուժկետներ հագեցվել են ժամանակակից բժշկական սարքավորումներով և գույքով:
- Նորոգել և գործարկել է 21 համայնքային կենտրոն:
- Հիմնել է 27 հա անտառ:
- 6 գյուղում կառուցել է փողոցային լուսավորության ցանց:
- Կառուցել է 6 գյուղական կամուրջ:

2017 Թ. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ

1. Արագածոտնի մարզի Կաքավաձոր համայնքի խմելու ջրագծի վերանորոգում
2. Արագածոտնի մարզի Ծաղկաշեն համայնքի ոռոգման ջրագծի վերականգնում
3. Արագածոտնի մարզի Թաթուլ համայնքի խմելու ջրագծի վերականգնում
4. Արագածոտնի մարզի Լուսակն համայնքում ծառատունկի կազմակերպում
5. Արմավիրի մարզի Բաղրամյանի ենթաշրջանի Արգինա համայնքի մանկապարտեզի վերանորոգում
6. Գեղարքունիքի մարզի Փամբակ, Գեղամասար և Արեգունի համայնքներում սպառողական կոոպերատիվների խթանում
7. Գեղարքունիքի մարզի Փամբակ, Գեղամասար, Արեգունի համայնքներում հիմնված սպառողական կոոպերատիվների անդամների համար տեսական և գործնական սեմինար պարապմունքների կազմակերպում
8. Գեղարքունիքի մարզի Փամբակ, Գեղամասար և Արեգունի համայնքներում գործող կոոպերատիվների համար ջերմոցների կառուցում
9. Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնքում գործող կոոպերատիվի համար խորքային հորի վերակառուցում
10. Գեղաքունիքի մարզի Արեգունի համայնքում ոռոգման համակարգի վերակառուցում
11. Գեղաքունիքի մարզի Գեղամասար համայնքում գործող կոոպերատիվի համար բիոգազի կայանի կառուցում
12. Գեղաքունիքի մարզի Փամբակ և Արեգունի համայնքներում գործող կոոպերատիվների համար բիոգազի փոքր կայանների կառուցում



Շէն Ֆրանս կազմակերպության նախագահ **Օհան Թուֆանյանը**, շնորհավորելով Շեն ԲՀԿ-ին 30-ամյակի առիթով, ողջունեց ներկաներին ազգանվեր աշխատանքի համար: Նա ասաց, որ սփյուռքի միություններին դժվար է եղել աշխատել գործող կոռուպցիայի և կամայականության պայմաններում: Այսօր նոր դռներ են բացվել, նոր իրականություն է: Քսանհինգ տարվա ընթացքում 1,5 միլիոն եվրոյից ավել է ներդրվել Շենի ծրագրերում: «Չէինք պատկերացնում, որ մեր պստիկ միությամբ կարող էինք այսքան երկար գործել և զգալի ներդրում կատարել մեր գյուղական համայնքներում: Հայաստանը մեզ համար հպարտություն է: Եթե միջին արևելքի երկու հազար տարի առաջ ապրած ազգերից շատերը արդեն գոյություն չունեն, ապա հայ ժողովուրդը, որ տեսել է ցեղասպանություն, բազմաթիվ դժվարություններ,ունի երկիր, այն էլ՝ վստահելի երկիր»,-ասաց Օհան Թուֆանյանը:

Թավշյա հեղափոխությունը հնարավորություն է ընձեռում, որ մարդիկ այլևս չլքեն իրենց երկիրը: Տարիների ընթացքում աշխարհով սփռված հայերը այսօր ներքաղաքական փոփոխությունների շնորհիվ պետք է ձգտեն գալ հայրենիք:

Շէն Ֆրանս կազմակերպության նախկին նախագահ **Ֆիլիպ Կարագուլյանը** ասաց, որ հայ ժողովրդին հույս էր պետք, վստահություն էր պետք կառավարության հանդեպ: Նոր վարչապետը, նոր կառավարությունը ամեն բան կանեն, որ գործերը դյուրին լինեն: Ժողովների ժամանակ, քննարկելով դպրոցների, բուժկետերի, տների նորոգման, ջրատար խողովակների տեղադրումը, մտածում էինք, որ գործ է, կանեն, կավարտեն. տասը տարվա խնդիր է: Ու այդպես երեսուն տարի է այստեղ ենք: Մտահոգություն կար, որ մի բան միշտ պակաս է: Այո՛, և դա թավշյա հեղափոխությունն էր, որը եկավ լրացնելու այդ բացթողումը, ինչը կդյուրացնի կազմակերպության աշխատանքը:



Ցալկեզյան հիմնադրամի նախագահ **Ջո Ցալկեզյանը** իր ելույթում նշեց, որ Հրաչ Գասպարի հետ որոշում են Կանադայից գալ Հայաստան՝ մասնակցելու թավշյա հեղափոխության քայլարշավին, և այս նպատակով անգամ նոր հարամարվետ կոշիկներ են գնել: Սակայն երբ նրանք ժամանեցին Հայաստան, հեղափոխությունը արդեն բարեհաջող ավարտվել էր: Նա բարձր գնահատեց Շենի հետ երկարամյա համագործակցությունը և հույս հայտնեց, որ Հայաստանը իր զարգացմամբ կհամեմատվի ոչ թե հարևան պետությունների, այլ Դանիայի նման երկրների հետ:

ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության տնօրեն **Անահիտ Սիմոնյանը** բարձր գնահատեց Շեն կազմակերպության 30-ամյա աշխատանքը: Նա նաև երախտագիությամբ նշեց Շէն Ֆրանս կազմակերպության վստահ հավատը հայրենիքի հանդեպ: Իր երախտագիտությունը հայտնեց Շենին բազմամյա գործունեության և հայրենիքին նվիրվածության համար:

Ելույթներ ունեցան նաև **շահառու համայնքների ներկայացուցիչներ**, որոնք հայտնեցին իրենց գոհունակությունը և շնորհավորանքները:

Իր ելույթում Ցալկեզյան հիմնադրամի փոխատենապետ **Հրաչ Գասպարը** ասաց, որ արդեն 29 տարի նվիրված է հայրենիքի շենացման գործին: Նա երախտագիտությամբ նշեց, որ երկրում և սփյուռքում ապրող շենականները պատասխանում են կանչերին, գնում են պատերազմելու, գյուղ շենացնելու, բայց չեն սիրում բարձրաձայնել: Իսկ դա աշխատող և առաքինի մարդու հատկանիշ է: Նա իր շնորհավորական խոսքը ավարտեց՝ գնահատելով Շենը որպես ազատագրական պայքար խորհրդանշող կազմակերպություն: